

ՍՐ. ԱՄԵՆԱՓՐԿԻԶ ՎԱՆՔԻ ԱՐԽԻԻԸ ԵՒ ԷՄԻՆ ՅՈՎՍԷՓ ԷՄԻՆԻ ԵՐԿՈՒ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Լ. Գ. ՄԻՆԱՍԵԱՆ

Նոր Զուղայի Սր. Ամենափրկիչ Վանքը Սփիւռքահայութեան կարեւոր այն վայրերից է, որ իր հիմնման օրից՝ 1606 թ.ից մինչեւ այսօր, իր կարեւոր դերն է ունեցել հայ ժողովրդի ազգային-կրօնական եւ ընդհանրապէս հայ մշակոյթի պահպանման ու զարգացման խնդրում:

Շնորհիւ իր ունեցած ընդարձակ կապի, այնտեղ հաւաքուել են մեծ թիւով զանազան գրութիւններ, որ պատմական ու ազգագրական տեսակէտից, խոշոր արժէք են ներկայացնում:

Վանքի արխիւում գտնուող այս նիւթերից ժամանակին օգտուել է Զուղայի պատմագիրը, ինչպէս եւ այլ ուսումնասիրողներ, բայց իրականում մնում է նախնական վիճակում, դիզուած այս ու այն պահանջներին մէջ:

Սրանից ճիշդ մէկ տասնամեակ առաջ, շնորհիւ օրուայ թեմակալ Առաջնորդի՝ Գարեգին Սրբազանի Զանքերին (այժմ Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ), դրանք յանձնուեցին տողերս գրողին, գիտական ձեւով դասաւորութեան ենթարկելու:

Դրա առաջին աշխատանքներն սկսուեցին 1972 թ.ին եւ շարունակուեցին մինչեւ 1975 թ., ապա կարճ դադարից յետոյ կրկին շարունակուեցին 1977 թ.ից մինչեւ 1980 թ.:

Առաջին շրջանում դասաւորուեցին 17, 18 եւ 19-րդ դարերի գրութիւնները, 1600 թ.ից մինչեւ 1900 թ., որոնց ցանկը մի ուղեցոյց գրքոյկով տպագրուեց 1976 թ.ին «Դիւան Նոր Զուղայի Սր. Ամենափրկիչ Վանքի — 1600 - 1900» խորագրով:

Երկրորդ շրջանում դասաւորուեցին 20-րդ դարի արխիւը, մինչեւ

1960-ական թթ., եւ նկատի ունենալով որ նոր աւելումով, մեծ փոփոխութիւն էր կրել նաեւ նախկին դասաւորումը, ուստի անհրաժեշտ նկատուեց նոր ուղեցոյց գրքոյկի տպագրութիւնը, որ մամուլի տակ է եւ շուտով կ'աւարտուի, ունենալով շուրջ եռապատիկ էջաթիւը՝ նախկին գրքոյկի:

Ստորեւ համառոտակի տալիս ենք արխիւի բաժինների խորագրերը, թուական քանակների հետ միասին:

Արխիւը բաղկացած է երկու գլխաւոր բաժնից, որ են՝ Հայերէն եւ Օտարալեզու:

Իւրաքանչիւր բաժին բաղկացած է երեք մասից, որ են.

1. Անհատական գրութիւններ.
2. Զանազան նիւթերով գրութիւններ.
3. Ստացուած եւ գրուած նամակներ ըստ վայրերի.

Հայերէն բաժնի անհատական մասի թղթապանակների թիւը հասնում է աւելի քան երեք տասնեակի, որոնց մէջ գրութիւններ կան մեր մի շարք բանաստեղծներից՝ Ոսկանուր Արովեանից, Աւետիք Իսահակեանից, Շիրվանզադէից, Ռաֆայէլ Պատկանեանից, Պերճ Պոչեանից, Վրթանէս Փափազեանից, Մեսրոպ Թաղեաղեանից, Ինչպէս եւ Յարութիւն Քչնյ. Շմաւոնեանից, Էմին Յովսէփ Էմինից, Յովհաննէս Այվազովսկուց եւ ուրիշներից:

Զանազան գրութիւններով թղթապանակների թիւը հասնում է աւելի քան 70-ի, որոնք իրենց մէջ պարունակում են առեւտրական զանազան գրութիւններ, ինչպէս եւ բանասիրական, բանաստեղծական, համախօսական, հաշուական, գոյքացուցակ, կոնդակ, կտակ եւ այլն:

Երրորդ մասը ստացուած եւ գրուած նամակներն են, որոնց վայրերի թիւը հասնում է աւելի քան 320-ի՝ Ա-Յ, որոնցից ոմանց թղթապանակների թիւը անցնում է 60-70-ից:

Օտարալեզու գրութիւններից ամենաընդարձակը պարսկերէնի բաժինն է, որ հայերէնի նման բաղկացած է երեք մասից, իսկ միւսներն ունեն միայն մէկ մաս, դրանք են.

- | | |
|---------------|---------------|
| 1. Անգլերէն | 7. Հնդկերէն |
| 2. Արաբերէն | 8. Պարսկերէն |
| 3. Գերմաներէն | 9. Ռուսերէն |
| 4. Եբրայերէն | 10. Վրացերէն |
| 5. Թուրքերէն | 11. Ֆրանսերէն |
| 6. Իտալերէն | |

Պարսկերէնի բաժնում կարեւոր գրութիւններից են վաճառագրերը, առեւտրական գրութիւնները, արքայական հրովարտակները եւ այլն:

Այս բաժնի անհատական մասի ամենից հետաքրքիրն ու արժեքաւորը Մինաս նկարիչի մասին եղած 14 վաւերագրերն են, որոնք թէեւ գրուած չեն իր կողմից, բայց դրանց մէջ յիշուած է Մինասի անունը, որպէս յայտնի նկարիչի եւ բոլոր Զուլայի նկարիչների 17-րդ դարի վարպետը, որի մօտ է սովորել անգամ Իրանի յայտնի նկարիչ Ռեզա Աբրահան¹:

Համառօտելով մեր խօսքը արխիւի մասին, այժմ անցնենք այդտեղ գտնուող հայ ազատագրական պայքարին լծուած էմին Յովսէփ էմինի երկու նամակներին:

Արխիւի հայերէն բաժնի անհատական գրութիւնների մէջ կան չորս գրութիւն, որոնցից երկուսը գրուած են էմինի կողմից, միւս երկուսից մէկը մի նամակ է ուղղուած նրան, վաճառքի օրուան կառավարիչների կողմից, իսկ երկրորդը՝ նրա համառօտ կենսագրութիւնն է առնուած 1903 թ.ի «Մուրճ» ամսագրից: Բացի սրանցից, էմինին վերաբերող գրութիւններ կան նաեւ Պետրոս Աղանուրին պատկանող թղթածրարների մէջ, որոնք դուրս են մնացել արխիւի դասաւորումից:

Նախքան այդ գրութիւններին անցնելը, անհրաժեշտ ենք գտնում մի քանի խօսքով անդրադառնալ նաեւ էմինի անուան եւ նրա կողմից գրուած կենսագրական գրքի հրատարակութիւններին:

էմինի մասին կայ մեծ քանակութեամբ գրականութիւն, թէ՛ հայոց պատմութեան գրքերի մէջ եւ թէ՛ առանձին մենագրութիւններում ու հանրագիտարաններում², որոնց բոլորի մէջ եւս, նրա անունը գրուած է Յովսէփ էմին, որ նրա ճիշդ անունը չէ. նրա փոքր անունն է էմին, հօր անունը՝ Յովսէփ, իսկ ազգանունը՝ էմին կամ էմինեան, ուրեմն՝ իրական անունը կը լինի էմին Յովսէփ էմինեան:

էմինը իր կենսագրութիւնը գրել է անգլերէնով 1788 թ.ին, որ տըպագրել է 1792 թ.ին, Լոնտոնում. երկրորդ անգամ, որոշ աւելումներով լոյս է տեսել 1918 թ.ին Կալկաթայում, էմինի քրոջ թոռնուհու՝ էմի Աբգարի ջանքերով. իսկ հայերէն թարգմանութիւնը 1958 թ.ին, որ

1. Մինասի մասին մի փոքր յօդուած է տպագրուել նաեւ պարսկերէն «Այանդէ» ամսագրում (Թեհրան), 1360 թ. համար 9-10, էջ 734 - 737:

2. Հայկական Սովետական Հանրագիտարան-ի մէջ (Գ. հար., էջ 45), գրուած է «Յովսէփ էմին», թեւ ճիշդի տակ «էմին Յովսէփ» է գրուած, բայց ճկատի է առնուած ազգանունով: Անգամ սրանից ճիշդ տաս տարի առաջ հրատարակուած Ս. Ա. Շտիկեանի Հայ Նոր Գրականութեան Ժամանակագրութիւն, 1809 - 1850, Երեւան, 1973, էջ 76 եւ Գ. Ստեփանեանի Կենսագրական Բառարան-ի մէջ, Երեւան, Ա. հար., 1973, էջ 339, գրուած են «Յովսէփ էմին»: Նոյնպէս եւ Լեոյի «Երկերի ժողովածու»ում Հայոց Պատմութիւն Գ. հատոր, Բ. գիրք, Երեւան, 1973, էջ 282-328, գրուած է «Յովսէփ էմին»:

թարգմանուել է Յակոբ Խաչմանեանի կողմից եւ տպագրուել է Պէյ-րուսի «Մշակ» տպարանում, «Ազգակ»-ի մատենաշարով:

Էմինը իր գրքում գրում է, որ իր անունը էմին է, հօր անունը՝ Յովսէփ եւ ազգանունը՝ էմինեան:

Էմինի կենսագրութեան 1918 թ.ի հրատարակութեան խորագիրն է էմին Յովսէփ Էմինի Կեանքն ու Արկածները (Life and Adventures of Emin Joseph Emin, 1726 - 1809): Դժբախտաբար մենք ձեռքի տակ չենք ունեցել Լոնտոնի տպագրութիւնը, եւ անգամ Սպահանի համալսարանի եւ այլ գրադարաններում հնարաւոր չեղաւ գտնել, իմանալու համար թէ ինչ խորագիր է ունեցել: Բայց էմինը իր նամակներում երբեմն ստորագրել է Յովսէփ Էմին, որպէս ազգանուն եւ այդպիսով էլ իր անունը, մնացել է Յովսէփ (իր փոքր անունը) եւ էմին (ազգանունը), թիւրիմացութեան մէջ գցելով բոլորին³:

Այժմ տանք Վանքի արխիւում գտնուող էմինի երկու նամակների բովանդակութիւնը, որոնք թէեւ պատմական նշանակութիւն չունեն, բայց որպէս նշխարներ, կարեւոր արժէք են ներկայացնում:

Նամակներից մէկը գրուել է 1783 թ.ի Թիրայ ամսի 27-ին, Շիրագից եւ ուղղուած է Մկրտիչ Աստուածարան Վարդապետին, այսինքն՝ Զուղայի Առաջնորդին:

Նամակում նախ նկարագրում է իր ճամբորդութիւնը, որ Սպահանից-Շիրագ տեւել է ութն օր, ապա յայտնում է, որ մի քանի օրից յետոյ էլ ճանապարհուելու է դէպի Արուշեռ (Բուշեռ): Իր ճամբորդութեան եւ Առաջնորդի բարեխնամ լինելու մասին գրելուց յետոյ, յիշում է, իր ինչպէս իր հանգուցեալ հօր՝ Յովսէփի հանդէպ էր, այնպէս էլ իր անե-րոջ՝ ծերունի ուստայ Գասպարի հանդէպ սէր ցոյց տալ եւ պէտք եղած ժամանակ օգնի նրան, որ իր վերադարձին կը հատուցանի: Վերջում ստորագրուած է Ծառայից ծառայ էմինեանց էմին Յովսէփեան:

Երկրորդ նամակն ուղղուած է Տէր Պետրոս քահանային, որով յայտնում է, թէ Զուղայից դուրս գալով, «հազիւ հասել էինք Թխտին Փօլատու (Սպահանի այն օրուայ արուարձանը), Շիրագի ճանապարհի վրայ, իմացուեց մոռացել եմ իմ եւրոպական (փոքր) սուրս վերցնել,

3. Իր կենսագրութեան գրքի 1918 թ.ի տպագրութեան մէջ կայ մի տիտղոսաբերք, որ կրում է 1792 թ., եւ ըստ երեւոյթիմ Լոնտոնի տպագրութեան է պատկանում, ուր անունը գրուած է «Joseph Emin»: 1918 թ.ի տպագրութեան մէջ կայ նաեւ էմինի տապանաքարի արձանագրութիւնը (էջ 518), որի հայերէն թարգմանութիւնն է. «Այս է տապան Համադանցի էմինեանց Յովսէփի որդի էմին Աղային, որ փոխեցաւ աշխարհ վերին թիւն 1809 Օգոստ. 2»:

Կալկաթայի հրատարակութիւնն եւս լոյս է տեսել երկու տպագրութեամբ, մէկ՝ միացեալ հատորով եւ մէկ՝ երկու անջատ հատորներով:

ուստի մէկին ուղարկեցի, որ բերէր տանից, զոքանչս՝ փոխարէն փոքր սուրը տալու, նախ մեծն էր ցոյց տուել, որ հազար անգամ իրեն ասել էի, որ ոչ ոքի չպէտք է ցոյց տաս. թէեւ հարկ չունի, բայց չէի ուզում ոչ ոք դրա տեղն իմանար»։ Ապա խնդրում է Տէր Հօրից, որ իր անխելք զոքանչին այդ հասկացնի եւ պատուիրի մի տեղ պահեն, որ ոչ ոք իմանայ։ Նաեւ յիշում է մի մուրհակի խնդիր եւ առաջնորդին իր գրելիք նամակի մասին՝ ասելով որ «Սրբազան Առաջնորդին այնքան դատարկ գիր չեմ գրիր, մինչեւ ի լնուցու անի. (Աստուծով) զձեռն ծառային իւրոյ, ուստի քաջ գիտեմ զբնութենէս նորին մեծութեան, զի դատարկ թուղթն կիսարնթերցեալ եղեալ է ներքոյ դօշակին (ներքնակին) փթեցուցէ իրբեւ զպատառատուն յինս պառաւանց, անի. (Աստուծով) եւ աղօթիւք նորին ոչ ամանչեցից առաջի նորայ»։

Նամակի թուականը, տեղն ու ստորագրութիւնը կտրուած է դժբախտաբար, բայց վստահաբար գրուել է Շիրազից, նոյն 1783 թ.ին, իր ճամբորդութեան օրերին։ Վերջում յիշում է, որ նամակս ոչ ոքի ցոյց չտաս եւ «ճղատես»։ Բայց ուրախալի է որ այդ ցանկութիւնը չի կատարուել եւ այսօր նամակը կայ որպէս մի գեղեցիկ նշխար, հայ ժողովրդի ազատութեան համար այնքան տանջուած ու պայքարած էմին Յովսէփի էմինեանից։

Միւս գրութիւններից մէկը կրում է 1849, 3 Մայիսի թ., սա նամակի պատճէնն է, որ ուղղուել է էմինին՝ վանքի կառավարիչ քահանաների կողմից, որպէսզի իր նուէրը չխնայի վանքին տալու, որ խիստ կարիքի մէջ է։

Զորրորդ գրութիւնը, ինչպէս յիշեցինք արդէն, էմինի կենսագրութիւնն է, առնուած 1903 թ.ի «Մուրճ» ամսագրից։

Վանքի արխիւում գտնուող կարեւոր մի քանի գրութեանց՝ Խաչատուր Աբովեանի, Յովհաննէս Այվազովսկու, Նկարիչ Մինասի եւ այլոց մասին գրուել է անցեալում, պիտի աշխատենք ապագայում եւս դրանցից ոմանք նիւթ դարձնել մամուլի, ի գիտութիւն մեր բանասէրների եւ ուսումնասիրողների։

**THE ARCHIVES OF SAINT AMENAP'ERGITCH MONASTERY
AND THE TWO LETTERS OF HOVSEP EMIN**

LEVON MINASSIAN

(Summary)

The article presents in short notes the present condition and the system of classification of the archives kept in St. Amenap'ergitch (Allsaviour) Monastery of New Julfa, Persia. The second part of the essay describes the content of the two letters written by Hovsep Emin (1726-1809), one of the most famous advocates of the freedom of Armenia, during the eighteenth century. These letters are now kept in the library of the monastery. They are addressed to Mgerditch Vartapet, the prelate of New Julfa, and to a priest Bedros, and discuss mainly personal and family problems.